

ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՑԱԾՐԱՀԱՍԱԿՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎՈՒՆՎՈՐԶ Ն.Ն.^{1,2}, ՄԱՐԿՈՍՅԱՆ Ռ.Լ.^{3,4}

¹ Մոսկվայի Ի.Մ. Սեչենովի անվ. պետական բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի և դիաբետոլոգիայի ամբիոն, Մոսկվա, Ռուսաստան

² Համառուսական Էնդոկրինոլոգիական գիտահետազոտական կենտրոն, Մոսկվա, Ռուսաստան

³ Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

⁴ Երևանի «Մուրացան» համալսարանական հիվանդանոց, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 05/02/2013թ., ընդունված է՝ 10/08/2013 թ.

Պայմանավորված ժառանգական գենետիկական հիվանդություններով, ցածր հասակը հաճախ կարող է բերել հոգեբանական շեղումների և կարող է սոցիալական անհարմարողականության դեզադապտացիայի պատճառ դառնալ: Ցածրահասակության հաճախ հանդիպող պատճառներից է Շերեշևսկու-Թերների համախտանիշը: Շերեշևսկու-Թերների համախտանիշի հանդիպման հաճախականությունը, նորածին աղջիկների շրջանում, կազմում է 1:2000-2500: Հիվանդությունը կրում է սպորադիկ բնույթ: Տվյալ պաթոլոգիային բնորոշ է ցածր հասակը, գոնադների դիսգենեզիան և ներքին օրգանների բնածին անոմալիաները:

Ցածրահասակությանը բնորոշ են նաև այլ գենետիկական հիվանդությունների (Պրադեր-Վիլիի, Սիլվեր-Ռասսելի, Կորնելիա դե Լանգեի) համախտանիշներ:

Գենային ինժեներիայի մեթոդով ստացված աճի հորմոնը իսկական հեղափոխություն կատարեց՝ պայմանավորված տարբեր պատճառներով ցածրահասակության բուժման գործում: Հնարավորություն ստեղծվեց բարձրացնել աճի արագությունը:

Գենետիկորեն պայմանավորված կարճահասակությունն ունեցող պացիենտների մոտ դիտվում է բնածին արատների բարձր մակարդակ, որը ողջ կյանքի ընթացքում պահանջում է առողջապահության տարբեր բնագավառների մասնագետների հսկողություն: Ժամանակին բժշկական միջամտությունը, այս խմբի հիվանդների մոտ, զգալիորեն նվազեցնում է վաղ մահացության վտանգը և բարելավում է կյանքի որակը: Պաթոլոգիայի վաղ ախտորոշման, ինչպես նաև ժամանակակից մեթոդների օգտագործման ուսումնասիրությունը մնում է չլուծված և դրանով առաջացնում պահանջվածության խնդիր: